



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 4 ՅՈՒՆԻԱՐ, 2021

## ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔԵ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚մ եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՐՄՈՍ 143 ՈՂԲ ԵՒ ԶՂԶՈՒՄ

**Տ**էր, լսէ իմ աղօթքս,  
դուն՝ որ հաւաքարիմ ես՝ ականջ դիր աղաչանքներուս,  
դուն՝ որ արդար ես՝ պատասխան ԿՈՒՐ ինձի:  
Ես քու ծառադ եմ, զիս դատաստանի մի՛ ենթարկեր,  
որովհետեւ չկայ կենդանի արարած մը որ քու դիմացդ արդարանայ:  
Թշնամին զիս հալածեց, կեանքս հողին հաւասարցուց,  
եւ զիս խաւար աշխարհին բնակիչ դարձուց, արդէն մեռած մարդոց պէս:  
Հոգիս խռովքի մէջ է, սիրտս կը սոսկայ:  
Կը յիշեմ անցեալ ժամանակները, կը խորհիմ քու բոլոր գործերուդ մասին,  
կը խոկամ ըրածներուդ մասին:  
Ձեռքերս քեզի կ'երկարեմ օգնութեան համար.  
Ծարաւ հողի պէս՝ հոգիս ծարաւ է քեզի:  
Շուրջ ըրէ, Տէր, պատասխան ԿՈՒՐ, հոգիս արդէն կը մարմնի,  
ինձմէ երես մի՛ դարձներ, մի՛ ձգեր որ ողջ-ողջ գերեզման իջնեմ:  
Ամէն առաւօր ինձի սէրդ լսել ԿՈՒՐ, որովհետեւ ես քեզի վստահեր եմ:  
Ահա քեզի կը դիմեմ, ցոյց ԿՈՒՐ՝ ինչ ձեւով կ'ուզես որ ապրիմ:  
Տէր, ազատէ զիս թշնամիներէս, ես քեզ իմ ապաւէնս դարձուցի:  
Քու կամքդ կատարել սորվեցուր ինձի, որովհետեւ իմ Աստուծոս ես դուն.  
քու բարի Հոգիդ զիս ուղիղ ճամբով թող առաջնորդէ:  
Տէր, քու անունդ փառաւորելու համար՝ ազատէ կեանքս.  
դուն՝ որ արդար ես, այս նեղութենէն դուրս բեր իմ անձս:  
Ինձի հանդէպ սէրդ ցոյց ԿՈՒՐ. թշնամիներս ոչնչացուր,  
բնաջնջէ բոլոր անոնք որոնք ինձի նեղութիւն կու տան,  
որովհետեւ քու ծառադ եմ ես:

## ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔԵ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**  
**Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:**  
**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց աղքատութիւն:**  
**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:**  
**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:**

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
աջ ճի հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նաճապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ ճի արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ**  
  
**ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ**  
**9 ԳԼԽ**

**ԴԱՆԻԷԼ ԻՐ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՀԱՄԱՐ Կ'ԱՂՕԹԷ (9.1-19)**

Հապուած մը, որուն մէջ մեզի կը ներկայացուի Դանիէլի աղօթքը իր ժողովուրդին համար: Երեւոյթ մը որ կը սորվեցնէ, թէ ինչպէս Դանիէլ անարարքեր չի մնար, եւ երբեք անմասն չուզեր զգալ իր ժողովուրդին հետ: Դանիէլ ինքզինք կը ներկայացնէ մաս եւ բաժին իր ժողովուրդին հետ:

«**Երեսա Տէր Աստուծոյն դարձուցի**»: Կը նշանակէ դէպի Աստուած: Բայց պարզ այդ ուղղութեամբ դարձնելու մասին չէ խօսքը, այլ՝ իրենք Աստուծմէ երես դարձուցած էին իրենց մեղքին պարճառով, եւ հիմա Դանիէլ կարծէք ձեռով մը կը դառնայ ներկայացուցիչը այդ ժողովուրդին եւ կը վերադառնայ Աստուծոյ:

**Աղօթքի ձեւը:**

Ծոմապահութիւն, քործով ու մոխիրով աղօթք ու աղաչանք եւ խոստովանութիւն:

**Աղօթքի բովանդակութիւնը:**

Աստուծոյ ահաւորութիւնը: Աստուծոյ ուխտն ու ողորմութիւնը որուն հաւաքարիմ է Աստուած: Այդ Աստուծոյ գործերը մեծ են ու ահաւոր, այն ինչ ոչ մէկ միտք չի կրնար ըմբռնել:

Խոստովանութիւն: Անդրադարձ կատարուած սխալին: «Մենք մեղք գործեցինք, անօրէնութիւն ընել, ապստամբիլ, Աստուծոյ պատուիրաններէն ու օրէնքներէն խտրորիլ: Աստուծոյ ծառաներուն՝ մարգարէներուն խօսքը մտիկ չընել, որոնք կը դրկուին զգաստութեան հրաւիրելու ժողովուրդը»: Սա ցոյց կու տայ, որ Աստուած մնայուն կը հեղապնդէ մարդուն որպէսզի մարդը վերադառնայ իր սխալէն, որովհետեւ հակառակ մարդուն մեղաւորութեան, Աստուած անոր մահը չուզեր, այլ դարձը եւ փրկութիւնը:

Աստուծոյ կը վայելէ ողորմութիւն եւ ներողութիւն, որովհետեւ միայն ճշմարիտ Աստուած Ինքն է որ կ'ողորմի եւ կը ներէ: Իսկ մարդուս կը վայելէ ամօթը: Հետեւաբար, ժողովուրդը կ'ապստամբի Աստուծոյ ողորմութեան եւ ներողութեան դէմ: Աստուած զիրենք ազատագրած էր Եգիպտոսի ստրկութենէն, մեղքի ստրկութենէն, եւ ահա իրենք անգամ մը եւս կը վերադառնան այդ մեղքին ապստամբելով Աստուծոյ դէմ: Աստուած ոչ միայն ներեց եւ ողորմեցաւ, այլ նաեւ պատուիրաններ տուաւ, որպէսզի ըստ այնմ շարունակեն իրենց կեանքի ընթացքը: Ահա այս իսկ պարճառով Դանիէլ կը խոստովանի որ Աստուած այս աղէտը պարտաւորած էր, եւ այս մէկը արդար է, ասով զգաստութեան հրաւիրելու Իր ժողովուրդը, բայց անոնք անոր ձայնին մտիկ չըրին:

Այս բոլորէն ետք, սակայն, Դանիէլ կը խնդրէ որ Աստուած լսէ իր ծառային աղօթքն ու աղաչանքը Իր սիրոյն ու ողորմութեան համար, ոչ թէ կատարուած մեղքին համար, այլ զալիք պարտուիսին, որ քրտիքի ճամբով քրտեցաւ: Բայց այս բոլորը քակաւին Աստուծոյ ամբողջական բարկութիւնը չեն:

**ԳԱՐԻԷԼ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՅԱՏՐԷ (9.20-27)**

Ահա աղօթքին պատասխանը: Դանիէլ, այնպէս ինչպէս Մովսէսի պարագային, ինքզինք երբեք գերադաս չնկատեց, այլ ընդհակառակը, իր ժողովուրդին հետ մաս եւ բաժին, եւ ժողովուրդին մեղքը ներկայացուց որպէս թէ իրը, եւ ըստ այնմ Աստուծոյ ողորմութիւնը խնդրեց, եւ Աստուած պատասխանեց: Այդ պատասխանը, սակայն, զալիք պարտուիսն է, ինչպէս նաեւ Մեսիային գալուստը, որուն նաեւ պիտի անդրադառնայ Քրիստոս Մարտէոս 24 գլխուն մէջ: Այս բացատրութիւնը կը պահանջէ ուշադրութեամբ մտիկ ընելու եւ հասկնալու: